ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/221

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Մասնակից՝ «Օպտշին» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-37/21» գնանշման հարցման ընթացակարգ, սննդամթերքի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-37/21-01/078»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 01.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14072-2021 գրությամբ «Օպտշին» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 27.08.2021թ.-ի թիվ Ե/13/2281-21 գրության հիման վրա, 01.09.2021թ.-ին «Օպտշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) գործը մակագրվել է 01.09.2021թ.-ին:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 25.08.2021թ.-ի թիվ 450-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2020-2021թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, ընթացակարգի քննությունը 06.09.2021թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

08.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/216 համարի ծածկագիրը:

17.09.2021թ.-ին և 01.10.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 17.09.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 01.10.2021թ.-ին:

2. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 27.08.2021թ.-ի թիվ Ե/13/2281-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Պաշտպանիչ միջոցներ» ապրանքների ձեռքբերման նպատակով ս/թ մարտի 15-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-37/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՕՊՏՇԻՆ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ. ապրիլի 26-ին կնքվել է № ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ- 37/21-01/078 պայմանագիրը, որը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից միակողմանի լուծվել է՝ №17 և №19 չափաբաժինների մասով, քանի որ «ՕՊՏՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ապրանքը չի մատակարարվել:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա. պարբերության դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն Որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 45-րդ կետը, Ձեզ ենք ներկայացնում մասնակցի տվյալները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-37/21» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Օպտշին» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Օպտշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 26.06.2021թ.-ին գրությամբ դիմել է «Օպտշին» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14072-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2021/221 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Օպտշին» ՍՊԸ-ի միջև 26.04.2021թ.-ին կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-37/21-01/078» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին

մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակցույցով նախատեսված պաշտպանիչ միջոցներ (այսուհետ նաև՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 3-րդ, 17-րդ և 19-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագրի կնքման օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում:

iv. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 26.08.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին 04.08.2021թ.-ի թիվ Ե/13/2050-21 ծանուցման համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար պաշտպանիչ միջոցների ձեռքբերման նպատակով ս/թ մարտի 15-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-37/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, 17-րդ և 19-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով «Օպտշին» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ.-ի ապրիլի 26-ին կնքվել է թիվ 01/078 պայմանագիրը 232560 (երկու հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ) ընդհանուր գնով: Պայմանագրով մատակարարվող 17-րդ չափաբաժնով սահմանված 12 հատ պաշտպանիչ դիմակ փոխվող ֆիլտրերով, որի ընդհանուր գինը կազմում է 216000 (երկու հարյուր տասնվեց հազար) ՀՀ դրամ և 19-րդ չափաբաժնով սահմանված 24 հատ ֆիլտր աէրոզոլներից պաշտպանող, որի ընդհանուր գինը կազմում է 16560 (տասնվեց հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, «Օպտշին» ՍՊԸ-ի կողմից չի մատակարավել:

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի՝

- 2.4.1 կետի «Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով»:

- 2.4.2 կետի «Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում»,

- 2.4.4 կետի «Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով»:

- Հավելված N 1-ի Վաճառողը պարտավոր է մատակարարումը իրականացնել Պայմանագրի կնքման օրվանից 30 օրացուցային օրում:

Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1 կետը այն է, գնորդը իրավունք ունի՝

- 2.1.1 ապրանքը սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի,

- 2.1.7 միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե էականորեն խախտվել է պայմանագիրը,

- 2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտվել էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

Պատվիրատուն նաև տեղեկացրել է Մասնակցին, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «Օպտշին» ՍՊԸ-ի հետ 2021թ.-ի ապրիլի 26-ին կնքած թիվ 01/078 պայմանագիրը 17-րդ և 19-րդ չափաբաժինների մասով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14072-2021 գրությամբ «Օպտշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ հոդվածների համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում

որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ

իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակցույցով նախատեսված պաշտպանիչ միջոցներ (այսուհետ նաև՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունն անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Օպտշին» ՍՊԸ-ի միջև 26.04.2021թ.-ին կնքված թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-37/21-01/078» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 3-րդ, 17-րդ և 19-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագրի կնքման օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Օպտշին» ՍՊԸ-ի միջև 26.04.2021թ.-ին կնքված թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-37/21-01/078» ծածկագրով պայմանագրի շրջանակներում «Օպտշին» ՍՊԸ-ն չի կատարել կնքված պայմանագրով ստանձնած պարտականությունների ողջ ծավալը, համաձայն որի Պատվիրատուն միակողմ լուծել է Պայմանագիրը՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 26.08.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին 04.08.2021թ.-ի թիվ Ε/13/2050-21 ծանուցումը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Օպտշին» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի 26.08.2021թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նույն օրը հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Օպտշին» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և

դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14072-2021 գրությամբ «Օպտշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/221 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Օպտշին» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**